

ԳԱՎԱՄԴԱՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒՍԱՑ ԱՐՔՈՒՆԻՔԻ ՀԵՏ XVIII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍՈՒՄ

(Ավարտական շարադրության թեզերը)

1. Հայ-ռուս հարաբերությունների հարցով անցյալում զբաղվել են մի շարք պատմաբաններ՝ Եզյան, Երեցյան, Լեո և ուրիշները։ Սակայն այդ ուղղությամբ գիտական լուրջ և բազմակողմանի ուսումնասիրություններ կատարվել և ներկայումս կատարվում են Սովետական Հայաստանի մեր աչքի ընկնող պատմաբանների կողմից՝ Մ. Ներսիսյան, Աբր. Հովհաննիսյան, Աշ. Աբրահամյան, Վ. Պարսամյան և ուրիշները։

2. Հայ ժողովուրդը վաղուց ի վեր փոխհարաբերությունների մեջ է գտնվել ռուս մեծ ժողովրդի հետ. հին և միջնադարյան հայկական պատմության մեջ բազմաթիվ փաստեր են արձանագրված այդ առթիվ։ Մատենագրական այդ հիշատակություններից առանձնապես կարևոր է Տուտեորդու նամակը Գրիգոր Տղա կաթողիկոսին (1173—1193 թ. թ.), որի մեջ նա խորհուրդ է տալիս նրան՝ չընկճվել Կաթոլիկ Եկեղեցու բռնությունների առաջ, այլ դիմել քույր եկեղեցիներին և խնդրել նրանց օգնությունը։ Տուտեորդին, օգնության դիմելու անհրաժեշտ եկեղեցիների շարքում, մատնացույց է անում «քրիստոնէութամբ պատուեալ մեծափառ Եկեղեցին Ռուզաց»։

3. Հայ ժողովուրդը XVIII դարի առաջին քառորդում անչափ ծանր վիճակում էր գտնվում. նա բացահայտ կեղեքվում էր տաճկա-պարսկական բռնապետությունների արյունոտ գերիշխանությունների տակ, տնտեսական կյանքի զարգացումը կանգ էր առել, գոյություն չուներ գույքի և իրավունքի ապահովություն։ Հայ ժողովուրդը, դրացի եղբայրական վրացի և ադրբեջանցի ժողովուրդների հետ միասին, պայքարում էր տապալելու օտարերկրյա լուծը ռուս ժողովրդի օգնությամբ։ Զարմանալի չէ, որ Երից Մանկանց Ներսես կաթողիկոսը Պետրոս Մեծին ուղարկած մի գրության մեջ նրան համեմատում է եբրայեցիներին գերությունից ազատող Մովսես մարգարեի հետ և խնդրում է գալ և ազատել իրենց. «Այլ լեր իբրև զմեծն Մովսէս մարգարէ,— գրում է նա,— և ազատեա զմեզ ի ձեռաց փարաւոնի...»։ Ցարական կառավարությունն աշխատում էր հաստատվել Անդրկովկասում։

4. Հայ ժողովրդի ազատագրության ուղղությամբ առաջին գործնական քայլերն արել է Պետրոս Մեծը. նրա խոստումը Իսրայել Օրուն և նրա պատվիրակ Կարապետի միջոցով ուղարկած հրովարտակը՝ հայ ժողովրդին իր հովանու տակ վերցնելու մասին, մեծապես ոգեշնչել է ազատագրական պայքարի մարտիկներին Հայաստանում։ Պետրոս Մեծը իր հրովարտակում որոշակի հայտարարել է. «Մենք ձեր խնդրվածքով մեր հովանու տակ ենք վերցնում և պատրաստ ենք ձեզ ազատել անհավատների լծից»։

5. Էջմիածնի ռուսաց արքունիքի հետ XVIII դարում վարած հարաբերությունների մեջ կարևոր իրադարձություն է Սիմեոն կաթողիկոսի 1766 թվին Եկատերինա II-ի մոտ ուղարկած պատգամավորությունը՝ Ռուսաս-

տանում գտնված հայ եկեղեցական համայնքները էջմիածնին ենթարկելու մասին, որը սիրալիր ընդունվել է թագուհու կողմից, հարգվել է նրա խնդրանքը և 1768 թվին այդ առթիվ նրան հատուկ հրովարտակ է ուղարկվել։

6. Սիմեոն կաթողիկոսը իր երախտագիտությունը արտահայտելու համար 1771 թվի հուլիսի 10-ին սահմանել է հայոց եկեղեցիներում հատուկ մաղթանք՝ կայսերական տոնին մշտապես մատուցելու համար, որի տեքստը շարադրել է անձամբ ինքը։

7. Էջմիածնի հարաբերությունների ռուսաց արքունիքի հետ սերտացման ուղղությամբ անչափ մեծ գործ է կատարել հայրենասեր Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը, որը Ռուսաստանի թեմի առաջնորդ է նշանակվել Սիմեոն կաթողիկոսի կողմից 1773 թվին։ Արղության անվան հետ կապված է Ղրիմի հայոց տեղափոխությունն և Նոր-Նախիջևանում հաստատվելուն աջակցելը, 1779 թվին Պետերբուրգում հայոց եկեղեցու կառուցումը, և, ամենից կարևորը, ռուսաց արքունիքի ղեկավար շրջանի հետ վարած մի շարք բանակցությունները՝ հայ ժողովրդի ազատագրության գործին աջակցելու ուղղությամբ։

8. Սիմեոն կաթողիկոսի մահվանից հետո, նրա հաջորդ Ղուկաս կաթողիկոսը շարունակում է բարեկամական հարաբերությունները ռուսական արքունիքի հետ։ 1783 թվին նրան է այցելում ռուսական արքունիքի ներկայացուցիչ Ռայնեքսը՝ իշխան Պոտյոմկինի, Հովսեփ արքեպիսկոպոսի և Հովհաննես Լազարյանի հատուկ հանձնարարականով՝ կազմակերպելու հայոց ապստամբությունը Թյուրքիայի և Պարսկաստանի դեմ։ Ղուկաս կաթողիկոսը որոշ զգուշություն է ցուցաբերում։ Նրա այդ վերաբերմունքն արդյունք էր ո՛չ թե նրա հակառուսական ինչ որ օրիենտացիայի, ինչպես փորձել են մեկնաբանել ոմանք, այլ որոշ զգուշավորության՝ չգրգռելու Թյուրք և պարսիկ բռնակալների զայրույթը նրանց իշխանության տակ գտնվող հայ ժողովրդի վրա։

9. Հայ ժողովրդի ազատագրական գործում խոշոր դեր է ունեցել ռուս հանճարեղ զորավար Սուվորովը, որը սիրված է եղել հայ ժողովրդական լայն շրջանում. Հայաստանում նրան անվանել են «Ազատարար Ս. Գեորգ»։

10. XVIII դարի երկրորդ կիսում հնարավոր չեղավ իրականացնել հայ ժողովրդի ցանկությունը՝ ազատագրվելու պարսկա-թյուրքական հարստահարությունից ո՛չ այն պատճառով, որ ռուսաց արքունիքը չէր ցանկանում այդ, այլ որ միջազգային հարաբերությունները թույլ չտվին Ռուսաստանին զինական ակտիվ օգնություն ցույց տալ հայ ժողովրդին։

11. Հայ ժողովրդի ազատագրական շարժումները պսակվեցին հաջողությամբ. 1827 թվին ազատագրվեց և Ռուսաստանին միակցվեց Արևելյան Հայաստանը։

Սակայն հայ ժողովուրդը լիովին ազատագրվեց և իր քաղաքական անկախությունը ձեռք բերեց միայն սովետական իշխանության օրոք։